

ՉԱՌԱԲԻ-ԽԱՆ - ՎԵՐԱԾՆՎԱԾ ԵՎ ՎԵՐԱԳՏԱԾ ՓՈՔՐԻԿ ՎԱՆ*

«Երէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս աջ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ յիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուագեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ»:

Վերջապես լույսը բացվեց: Այս համեստ, փոքրիկ ճաշկերույթին մասնակցած սեղանակիցներն ամբողջ գիշեր չքնեցին, միայն խիստ ընդարմացածները երբեմն-երբեմն մի քանի անգամ դանթեցին իրենց նստած տեղերում, ուղղակի սեղանի մոտ՝ այդ կերպ թարմացնելով իրենց քիչ թե շատ մթագնած և բթացած ուղեղները: Դանթելուց հետո, որոշ չափով թարմացած, կրկին շարունակեցին իրենց բուռն ու ջերմ զրույցը, որի վերջը չէր երևում: Երեխաները դեռևս քնած էին: Նրանք նախօրյակին անցկացրել էին իրենց ամենաերջանիկ օրը՝ երանելի ցնծության մեջ թաթավված: Զադոն այդ օրը գործի չգնաց, որովհետև խիստ գինովցած էր և անքուն: Իսկ կանանց մոտ հոգնածության կամ անքնության նշույլ անգամ չէր նկատվում: Նրանք ամբողջ գիշեր համարյա անընդհատ շարժման մեջ էին եղել, ամառ տարել, ամառ բերել, թարմացրել գինու սափորը: Սեղանը միշտ առատ էր: Թվում էր, թե կանայք հանգստանալու կամ մի փոքր քունները առնելու կարիք էլ չունեն, որովհետև հոգու խռովքն ու մշուշոտ ապագայի նկատմամբ նրանց մտասևեռումներն ու վերլուծումները՝ վերջնական արդյունքի հանգելու և գտնելու կյանքի մոտալուտ ապագայի հեռանկարներ, ապարդյուն էին անցնում: Եվ դրա համար էլ նրանց զրույցն անվերջանալի էր:

Ինչո՞ւ Երկիրն այս օրի հասավ:

Այս հարցն էր հիմնական թեման մեր գաղթականների այս փոքրիկ խմբի զրույց-բանավեճի: Եվ, այնուամենայնիվ, բոլորը եկան այն եզրակացության, որ փոքր, խեղճ և անօգնական ժողովուրդները զրկված են ապրելու իրավունքից՝ գայլային անհագուրդ ախորժակով զրահավորված հզոր ու բարբարոս, անապատային վայրի ցեղերին

---

* Չորրորդ մասը տես № Դ, էջ 80:

հատուկ «քաղաքակիրթ» հավաքականությունների նկրտումների պատճառով. նկրտում, որը փոքր ժողովուրդներին, որքան էլ նրանք հազարամյակների պատմություն ունենան և աշխարհին դարերի ընթացքում շնորհած լինեն իրենց հոգևոր և մտավոր նվաճումները, այնուամենայնիվ դատապարտված են կործանման, բնաջնջման և իսպառ վերացման: Այդ է նրանց անխուսափելի ապագան: Փոքր և անօգնական ժողովուրդների ճակատագիրը հա՛ր և նման է այն որբացած երեխայի ապագային, որի կյանքի հետագա ընթացքը կախված է լոկ պատահականությունից, փոթորկահույզ ծովի ամենակործան ալիքի քմահաճույքից, նայած թե կյանքի այդ խռովահույզ ալիքը նրան ինչպիսի ափ դուրս կբերի: Հայ ժողովուրդը ճակատագրի բերումով ճի՛շտ և ճիշտ այդպիսի փոթորկոտ ալեկոծության է ենթարկվել, և նրա ապագան անորոշ է և չափազանց մշուշոտ...

Արևն արդեն դուրս էր եկել: Զառաբի-Խանում սկսվել էր մարդկանց անցուդարձը: Քանի որ, որպես Աստուծո արարած, գաղթականների առօրյան դեռևս իր բնականոն հունի մեջ չէր մտել, և մարդիկ առայժմ անորոշ, ծանր և անհեռանկար օրեր էին անցկացնում՝ բարվոք օրվա սպասումով, ապա նրանց հիմնական մտահոգությունն էր՝ ապաքինել իրենց հոգու և մարմնի վերքերը և ուժ գտնել՝ մտնելու համար մարդուն արժանի կյանքի խաղաղ ընթացքի մեջ:

Առավոտ վաղ Զառաբի-Խանի բակում սկսվեց օջախներից ծուխ բարձրանալ: Մարդիկ իրենց համեստ նախաճաշի պատրաստությունն էին տեսնում: Գաղթականների խմբերում դեռևս հիվանդների քանակը անհամեմատ շատ էր: Լինում էին նաև մահացություններ: Ցուրաքանչյուր ընտանիք առայժմ բացառապես մտահոգված էր հանապազօրյա իր ապրուստի հոգսերով. ինչ անել, ինչպես գոյատևել՝ մինչև կգային պայծառ ու լուսավոր օրեր: Բայց կյանքի այսքան ծանր օրերին անգամ նրանց մոտ, այնուամենայնիվ և ի բարեբախտություն, հուսալքության ու հոռետեսության նշույլ անգամ չէր նկատվում: Նրանք լավատես էին ապագայի նկատմամբ:

Գաղթականներին հուզող թեմայի նյութն անսպառ էր, և սեղանակիցների զրույցը շարունակվում էր ու շարունակվում, չէր գտնում իր ավարտը: Երեխաներն արդեն արթնացել էին և եկել-նստել սեղանի շուրջ: Մոլորները կերակրում էին նրանց:

Քանի որ ճաշկերույթի ողջ ընթացքում, օգտվելով ավագության իրավունքից, սեղանի թամադան Մարկոս աղան էր, ուստի Գրիգորը վեր կացավ աթոռից, անհանգիստ և անհամարձակ շարժումով վերցրեց գինու բաժակը, թամադայի ներողամտությունը հայցեց և ասաց.

– Մարկոս աղա, Զարուխ, կուզեմ մեյ պան ասել...

Մարկոս աղան, կռահելով Գրիգորի միտքը, կանխեց նրա խոսքը՝ խիստ փաղաքշական տոնով ասելով.

– Չե՛մ թույլ տա, հանքիստ նստի տեղտ: Թամադան էտ իրավունք ունի: Կխասկնամ, ինչ ի կուզես ասել: Քե խոսք չեմ տա:

– Ախար չեղավ, Մարկոս աղա: Տու քե ինքնակոչ քերպով թամադա նշանակիցիր, մկա էլ կփոնանա՞ս վեր մե, – կատակի տալով իր դժգոհությունն արտահայտեց Վարդանը:

Մարկոս աղան կռահել էր, որ Գրիգորը ցանկանում է իր և Վարդա՛նի ընտանիքների անունից շնորհակալություն հայտնել իրեն և իր կնոջը: Հենց այդ պատճառով էլ նա թույլ չէր տալիս խոսելու նրան: Եվ իրոք, Մարկոս աղայի այս քայլը խիստ մարդասիրական էր և բարեգործական, որը և Գրիգորին ու Վարդանին դրել էր անելանելի դրության մեջ... Ինչպե՞ս պատասխանել այս վարմունքին:

– Ես ձեզ խոսք չեմ տա, – խոսքն ուղղված էր Գրիգորին և Վարդանին, – կարքելեմ խոսել էտ մասին, – ասաց Մարկոս աղան:

Գրիգորը ստիպված նստեց:

–Համենայն թեպս մարդկային կյանք, ինչպես էլ էլնի էնի՝ վատ կամ լավ, կշարունակի ուր անկասելի ընթացք վեր աշխարքին: Փայց, դիտելով շրջապատ, ակամայեն կզարմանաս. ինչի՞ ամենաարդար Աստված Է՛ս ճակատագիր կանխատեսեց մեզ, – շարունակեց իր խոսքը Մարկոս աղան:

– Աստուծո քորձեր անքննելի են, Մարկոս աղա, – վեր նայելով և երեսը խաչակնքելով ասաց Զարուհի-Զարուխը, – մեռնեմ Ինոր զորության: Մարդի՛նչ են, որ չարացիր են և կքաղեն իրենց կատարածի պտուղներ: Փայց մեր հո՛ւյս-ապավեն էլի Աստված ի:

– Ճիշտ կասի Զարուխ, մենք ի, որ չարացիր ենք, և Աստված կպատժի մեզ: Աստված սար կտիսնա, ծուն կտնի, – կարճ և կտրուկ ասաց Զադոն:

– Էս անմեղ լաճե՞ր ինչ մեղավոր են, որ Աստված ինոնց կպատժի, – մեջ մտավ Մնոն:

Աստված մեռնողի՛ն չի պատժի, Մնո, որդիս, Աստված կենդանի՛ մնացողին ի, որ կպատժի: Մեռնող մեռա՛վ՝ պրծա՛վ: Կենդանի մնացո՛ղն ի, որ ուր ողջ կյանքի մեջ պիտի տառապի՝ պատժվելով, – եզրակացրեց Մարկոս աղան:

Երեխաները կերել-վերջացրել էին և դուրս եկել բակ: Կեսօր էր:

Մակոս աղան վեր կացավ և կնոջը դուրս կանչեց: Մի քանի րոպե հետո նրանք վերադարձան: Բոլորը՝ տղամարդ թե կին, հավաքվեցին սեղանի շուրջ: Մարկոս աղան վերցրեց բաժակը և ասաց.

– Արդեն երկրորդ օրն ի, ինչ մենք կքթնվենք էս սեղանի շուրջ, ուստի թույլ տվեք օրհնել էս օջախ և շնորհակալություն հայտնել ինոր նոր տերերուն: Մենք՝ ես և Զարուխ, շնորհակալ ենք ձեզնե, Գրիգոր, Վարդան, Սաթեն, Զարեր: Թող էս օջախ լի՛ և կենսուրա՛խ էլնի այսուհետև՝ ձեր շնորհիվ, ձեր ջանադրությամբ և կյանքի նկատմամբ ձեր լավատեսությամբ: Մոռացեք անցյալ՝ տառնություններ և տառապանքներ, էնի անցա՛վ-պրծավ, թեև էտի անհնար ի, որովհետև էնի մեր կյանքի մաս կկազմի: Անցյալ և ներկան շաղկապված են իրարու: Առանց մեկ մյուսի՝ անհնար ի: Մենք՝ ես և Զարուխ, համոզված ենք, որ էս օջախ շատ կարճ ժամանակի ընթացքին կքթնի ուրան և կմտնի կյանքի լիարժեք հունի մեջ: Մենակ տուք չեք, մենակ մենք չենք, այլ էս համատարած շրջապատ, կխասկնա՞ք, – ձեռքի շարժումով ցույց տալով ողջ Զառարի-Խանը, – փոլորն են շատ ծանր վիճակի մեջ: Տուք պիտի ստեղծեք նոր կյանք: Իսոնք փոլոր ժամանակավոր թժվարություններ են: Ես հույս ունեմ, որ մենք շատ շուտով կհաղթահարենք ներկա էս ծանր, շա՛տ ծանր օրեր և կխասնենք խաղաղ և փարքավաճ ժամանակների: Կմաղթեմ փոլորիդ

ուժ, կամք, կորով, սեր, միություն և, ամենակարևորը՝ համփերություն, համփերություն և նորեն համփերություն: Մենք մեր հույս պիտի թալենք վեր Աստծուն: Աստված մեծ ի, Էնի չի թողնե մեզ անտեր:

- Ամենակարո՛ղ Տեր, զորավիգ կայնի Էս անտեր ու տառապյալ ժողվրդին, Տու ես մեր հո՛ւյս -ապավեն, - դեպի վեր նայելով աղաչախառն ասաց Զարուհի-Զարուխը:

Ի համաձայնություն Մարկոս աղայի մաղթանք-հորդորների, բոլորը վեր կացան տեղերից, վերցրեցին իրենց բաժակները և «Տեր Աստված, Քյո գթասրտությանն ու ողորմածությանն ենք ապավինե» ասելով քաղցրորեն ըմպեցին իրենց բաժակների դառնահամ, բայց չափազանց կենսատու պարունակությունը:

- Զարուխ, - կնոջը դիմեց Մարկոս աղան, - պատրաստվի՛, արդեն ուշ ի, մենք Էսօր շատ կործ ունենք:

- Ես արդեն սնդուկների մեջ դասավորիր եմ ամեն ինչ, - պատասխանեց Զարուհի-Զարուխը:

- Մի անհանքստացեք, Մարկոս աղա, ես ձե կտանեմ, - ասաց Զադոն:

- Էս վիճակո՞վ՝ գինովցա՛ծ, հոգնա՛ծ, անքո՛ւն, ինչպե՞ս պիտի տանես, - առարկեց Մարկոս աղան:

- Ե՛ս չեմ տանե, ձիե՛ր կտանեն, - կատակի տվեց Զադոն:

Այս ասելով, Զադոն դուրս եկավ· Քիչ հետո Մարանդիզի Ավետիսի ձիակառքը, որին լծված էին երկու մուգ շագանակագույն ձիեր, կանգ առավ Մարկոս աղայի բնակարանի մուտքի մոտ:

Ներս մտավ Զադոն և ասաց.

- Ճայտոն պատրաստ ի:

- Մարանդիզի Ավետի՞ս մեզ պիտի տանի, - պատուհանից նկատելով ձիակառքը, հարցրեց Մարկոս աղան:

- Խա՛:

- Ինչի՞ ներս չհրավիրիցիր, անհարմար ի, - նեղսրտեց Մարկոս աղան:

- Ի՛նչ արիցի, ներս չմտավ, - արդարացավ Զադոն:

Քիչ հետո բոլորը դրսում էին, ձիակառքի շուրջ: Հրաժեշտ էին տալիս միմյանց: Առիթից օգտվելով, Գրիգորը և Վարդանը մոտեցան Մարկոս աղային, բռնեցին նրա աջը և խոնարհաբար և ջերմագին համբուրեցին այն՝ ի նշան իրենց շնորհակալության: Մարկոս աղան դժկամությամբ ընդունեց այդ վարմունքը: Բայց և այնպես, նրանց կողմից թույլ տրված այդ անկեղծ վարմունքը Մարկոս աղայի մոտ արթնացրեց հոգու անկեղծ և քաղցր մի խոտվք: Նա չկարողացավ զսպել իր հուզմունքը և մեկ առ մեկ սրտալի համբույր դրոշմեց Գրիգորի, Վարդանի, Սաթենիկի, Զարուհի-Զարերի ճակատներին և այնուհետև գրկեց փոքրիկ Վազգենին և սրտագին համբույրով սեղմեց իր կրծքին: Համարյա նույն վարմունքը դրսևորեց նաև Զարուհի-Զարուխը՝ ի նշան հրաժեշտի:

Երբ հրաժեշտի այս պարզ ու անկեղծ արարողությունը վերջացավ, Մարկոս աղան և իր կինը բարձրացան ձիակառք:

- Մարկո՛ս աղա, Զարո՛ւխ, տուք մեր փրկիչն եք, - չկարողանալով զսպել իր արցունքները, ասաց Սաթենիկը:

- Մնացեք խաղաղությամբ, Աստված ձեզ խետ, - համարյա միաժամանակ ասացին մեկնողները:

Մարանդիզի Ավետիսը թեթևակի մտրակեց ձիերին, և ձիակառքը շարժվեց: Ճանապարհողները լռելյայն, անշարժ և ակնդետ հետևում էին ձիակառքի ընթացքին՝ այնքան ժամանակ, մինչև որ այն դուրս եկավ Զառաբի-Խանի տարածքից և իրենց տեսադաշտից անհետացրեց այդ ազնիվ, առաքինի և սուրբ ամուսիններին՝ մերօրյա փրկիչներին:

Ձիակառքի մեկնելուց հետո, բոլորը կրկին ներս մտան: Կանայք սկսեցին հավաքել սեղանը, իսկ տղամարդիկ, քաշվելով սենյակի մի անկյուն, նստեցին և շարունակեցին իրենց զրույցը:

- Մենք ինչպե՞ս պիտի տուս կյանք էտ աստվածային մարդու լավության տակեն, - ներկաներին ուղղելով իր խոսքը, ասաց Գրիգորը:

- Կերևա, մենք ամփոխչ կյանքում պիտի ինոր պարտական մնանք, - ասաց Վարդանը:

- Ինոնք մկա էն տատարկ տան մեջ ի՞նչ պիտի անեն, - մտատանջ ասաց Գրիգորը:

- Մարկոս աղայի ծեռ քարի տակ չի, էնի էսօր ամեն ինչ կկարքաթրի, - վրա բերեց Զադոն: - Մի՛ սրտնեղեք, տղեկներ, ինոնք փացառիկ մարդիկ են: Ինոնք լավություն կանեն փոլորի՛ն և ո՛չ մեկին պարտական չեն համարի:

- Աստված ինոնց մեծ սրտի չափ ինոնց տա, - մաղթախառն ասաց Զարերը:

- Աստված ինոնց մեկ խազա՛ր անի, - Զարերի մաղթանքին ավելացրեց Նանիկը:

Տղամարդկանց զրույցը հիմնականում գնում էր վաղվա անելիքների մասին. ինչպե՞ս անեն, ի՞նչ աշխատանք գտնեն, որպեսզի կարողանան հայթայթել իրենց ընտանիքի ապրուստի միջոցը:

Երբ սեղանը վերջնականապես հավաքվեց, տունը մաքրվեց և կարգավորվեց, Նանիկը դիմեց Սաթենիկին.

- Իմ քյուր, փոլորս էլ շա՛տ հոքնած ենք, անքուն, տո՛ւք՝ առավել ևս: Մենք էթանք, տուք էլ մի քիչ պառկեք-հանքստացեք, - դիմելով ամուսնուն, - Ի՞նչ կասես, Զադո՛:

- Էհ, եթե կասես, էթանք, - իր պատրաստակամությունը հայտնեց Զադոն:

Քանի որ երեխաներն արդեն դրսում էին, Զադոն ու Նանիկը գնացին իրենց տուն: Մնոն մնաց:

- Մենք էս վիճակով, - ցույց տալով իրենց արտաքին վիճակը, - լայեղ չենք էս աբրեշումե տեղաշորերին, մենք պետք ի մաքրվենք, - ասաց Գրիգորը:

Քիչ հետո դրսում օջախ արեցին, ջուր տաքացրին և բոլորը լողացան՝ այդ կերպ թոթափելով երկա՛ր ամիսների ընթացքում իրենց մարմնի կրած տանջանքներն ու հոգու տառապանքները և քիչ թե շատ վերականգնելով աստվածաստեղծ մահկանացուի իրենց վիճակը: Ուշ երեկո էր արդեն, երբ նրանք պառկեցին քնելու: Մնոն նույնպես գիշերն անցկացրեց Գրիգորենց տանը:

⁂

Կրկին Աստուծո հավերժական լույսը բացվեց Զառաբի-Խանի՝ Վասպուրական աշխարհի գաղթականների այդ հավաքակայանի վրա: Կրկին օջախներից սկսեց ծուխ բարձրանալ՝ ի նշան վերածնված փոքրիկ Վանի կենդանության:

Զադոն, Գրիգորը, Վարդանը և Մնոն առավոտ վաղ գնացին շուկա: Տանը մնացին կանայք:

Թեև շուկան մոտ էր, բայց ամեն առավոտ էշով կամ այլ փոխադրամիջոցով տարբեր տեսակի սննդամթերք կամ այլ տեսակի առևտրի ապրանքներ էին բերվում Զառաբի-Խան՝ վաճառելու: Նանիկը, Սաթենիկը և Զարերը դրսում նախաճաշի պատրաստություն էին տեսնում: Ահա հենց այդ ժամանակ Զառաբի-Խանի գլխավոր մուտքի մոտ հայտնվեց մի մարդ՝ էշի վրա ինչ-որ բան բարձած, և ձայն տվեց.

- Լավ ա՛ղ, լավ ա՛ղ:

Քանի որ նորեկ գաղթականների մոտ ընդհանրապես պահեստված սննդամթերք գոյություն չուներ, ուստի Սաթենիկը դիմեց Նանիկին.

- Տուք տուն աղ ունե՞ք:

- Կարծեմ քիչ-միչ կա:

Սաթենիկը մոտ կանչեց աղավաճառին և ասաց.

- Ա՞ղ ի կծախես:

- Հա՛, քուր ջան, - կոպիտ ձայնով ասաց աղավաճառը:

- Պե խեմ ծե՞թ ի, թե՞ պետ ի:

- Այ քուր ջան, ոչ փե՛տ ա, ոչ էլ ձե՛թ, ա՛ղ ա:

- Է՛, կխասկնամ աղ ի, պե խեմ ծե՞թ ի, թե՞ պետ ի:

- Ի՞նչ լեզվով ասեմ, այ քուր, ո՛չ փետ ա, ո՛չ էլ ձեթ, ա՛ղ ա, ա՛ղ, - հավասարակշռությունից դուրս գալով ասաց աղավաճառը:

- Է, տղա, կխասկնամ, մենակ կասեմ՝ ծե՞թ ի, թե՞ պետ ի:

Այս, այսպես ասած, վեճը կշարունակվեր, եթե նրանց չմիջամտեր հարևաններից մեկը, որը երկու շաբաթ առաջ էր եկել Վանից: Նա ուղղակի դիմեց աղավաճառին.

- Էնի կասի՝ պե տիսնամ խոշո՞ր ի, թե՞ մանր:

- Էդպես ասա, հեր օրհնած, թե չէ՝ փե՛տ ա, ձե՛թ ա, - դժգոհելով ասաց աղավաճառը:

Պարզելով, որ աղը մանր տեսակի է, Սաթենիկը, որոշ սակարկությունից հետո, մի քանի կիլոգրամ գնեց:

Քիչ հետո տղամարդիկ վերադարձան և մտան տուն: Նրանց ետևից տուն մտան նաև կանայք:

- Է՛, ի՞նչ եք պիրե, - հետաքրքրությամբ հարցրեց Սաթենիկը:

Տարօրինակ թող չթվա Սաթենիկի այս մանկական հետաքրքրասիրությունը: Չէ՞ որ նա երկար ամիսներից ի վեր զրկված էր կանացիական, ընտանիքի հոգատար մոր հոգսաշատ այդ փոքրիկ հաճույքից:

Ի պատասխան Սաթենիկի հարցի, Գրիգորն ու Վարդանը ցած դրեցին իրենց ձեռքի զամբյուղները և մեկ առ մեկ դուրս բերեցին նրանց միջի պարունակությունները. մատնաքաշ հաց, փաթաթես, գլուխ սոխ, տարբեր տեսակի ձավարեղեն, ալյուր, յուղ, տարբեր տեսակի կանաչեղեն... Կանայք նկատեցին, որ Զադոյի և Մնոյի թևերին գցված են մի քանի հնամաշ հագուստեղեն, որոնք, սակայն, հենց առաջին հայացքից աչքի էին ընկնում իրենց արտակարգ

մաքրությամբ: Այս բոլորը գնել էին Գրիգորն ու Վարդանը, որոնք իրենց խնայած ոսկին շուկայում վերածել էին դրամի և կատարել մի քանի գնումներ: Զադոն և Մնոն իրենց թևերին գցված հագուստները հանձնեցին կանանց:

- Իսո՞նք ինչեր են, - մատնանշելով երկու մեծ տոպրակները և շոշափելով այն, հարցրեց Զարերը:

- Արևածաղկի և դդումի սերմեր են, - ասաց Գրիգորը:

- Մուկ ծակ չի մտնե, ցախավելն էլ պոչի՞ն կկապեք, - դժգոհեց Սաթենիկը:

- Իսոնք մե՛ր համար չեն, կնի՛կ, իսոնք մեր ապրուստի միջոցներն են, - վրա բերեց Գրիգորը:

- Չեմ խասկնա, - չգոհանալով պատասխանից, շարունակեց Սաթենիկը: - Մե՛ր համար չեն... Մեր ապրուստի միջո՛ց են... Հանելո՞ւկ ի կասես, ինչ ի:

- Էսօր իսոնք կբովեք՝ աղով, - խոսքն ուղղված էր Սաթենիկին և Զարերին, - մենք՝ ես և Վարդան, առավոտ կտանենք շուկա ծախելու՝ փաժակով, - իր միտքը ճշտեց Գրիգորը:

- Զադո՛ն էտ միտք թելաթրեց: Մեր ապրուստ առայժմ էտ միջոցով պիտի հայթայթենք, - եղբոր միտքը լրացրեց Վարդանը:

- Ահա՛ թե ինչ, - ծորացրեց Սաթենիկը:

- Ուրիշ ճար չկա, պետք ի հարմարվենք:

Ամբողջ ցերեկն այս երկու ընտանիքներն զբաղված էին իրենց նորօրյա տնտեսական գործերով. վերջնականապես տեղավորվեցին, կարգավորվեցին և մեծ սպասումով պատրաստվեցին հաջորդ՝ զառաքիխանյան իրենց համար արտասովոր, անորոշորեն մտատանջ ու հուսաշատ քաղցր օրվան:

Կանայք կատարեցին տղամարդկանց հանձնարարությունը՝ պատվիրված ձևով բովելով արևածաղկի և դդումի սերմերը:

Զառաքիխանյան՝ իրենց համար այնքա՞ն երանելի և այնքա՞ն ըղձալի հոգնատանջ ընտանեկան խաղաղ առաջին օրն անցկացրին մեր նորեկ գաղթականները: Կեսգիշեր էր արդեն, երբ նրանք պառկեցին քնելու:

Հաջորդ առավոտյան տիեզերքի միակ կենսատուն՝ լուսահաղորդ և ջերմացուցիչ Արփին սկսեց տվնջյան իր հավերժական կորագիծը: Գաղթականների այս փոքրիկ հավաքակայանում՝ Զառաքի-Խանում, կրկին սկսվեց մարդկային կյանքի հարաշարժ ընթացքի համեստ աշխուժությունը: Մարդիկ վերստին սկսեցին զբաղվել հանապազօրյա իրենց անվերջանալի գործերով:

Հենց այդ առավոտից Գրիգորի և Վարդանի ընտանիքների համար բացվեց նոր ու լուսավոր կյանքի հեռանկարներ: Այդ օրից սկսած նրանց ընտանիքների յուրաքանչյուր անդամ արդեն ուներ հոգնաշատ կյանքի իրեն բաժին հասած պարտականությունը:

Թվում էր, թե նրանք նորից ծնվեցին և վերապրեցին: Թվում էր, թե նրանց համար Երկրի վրա ամեն ինչ նորից նոր էր սկսվում...

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ